

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արարատի մարզպետարանի գենդերային
հարցերով մշտական հանձնաժողովի նիստի

07.07.2014թ.

ք. Արտաշատ

Ժամը 11⁰⁰

Նիստը վարում է հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Վարդանյանը,
քարտուղարում է Յողիկ Գրիգորյանը

Օրակարգում՝

Համագործակցություն ինամակության և հոգաբարձության
մարմինների, ուստիկանության և ՀԿ-ների հետ գենդերային բռնության
դեպքերի հայտնաբերման համար

/զեկ. անչափահասների բաժնի ավագ տեսուչ Մ. Գրիգորյան /

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի անդամներից 19-ից 13-ը:

Լսեցին՝

անչափահասների բաժնի ավագ տեսուչ Մ. Գրիգորյանին



Աշխատանքներ է տարվում համայնքների բնակիչների հետ
գենդերային բռնության վերաբերյալ, որը նպաստում է գենդերային
բռնության նվազեցմանը, ինչպես նաև անհատի ինքնագիտակցության
բարձրացմանը: Այդ աշխատանքները կատարվում է ինամակալության և
հոգաբարձության հանձնաժողովների, մարզպետարանի համապատասխան
բաժնի և ՀԿ-ների հետ:

Արտահայտվեցին Շահումյան համայնքի ինամակալության և
հոգաբարձության հանձնաժողովի անդամ Շուշանիկ Գրիգորյանը: Նա նշեց,
որ համայնքում բնակչության հետ տարվում են համապատասխան
աշխատանքներ: Բռնության դեպքերը կանխարգելելու և նվազեցնելու
համար անցկացվում են կլոր սեղաններ և մի շարք այլ միջոցառումներ:

Համայնքը պատրաստակամ է աջակցելու նման երևույթների ենթարկված անձանց ցուցաբերել բժշկական, սոցիալ-հոգեբանական, իրավական օգնություն:

<<Իրավապաշտպան>> ՀԿ-ի ղեկավար Ա. Հովհաննիսյանը հայտնեց, որ իրենք նույնպես պատրաստակամ են բնակչությանը տեղեկացնել գենդերային բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրելու սահմանված մեխանիզմներին:

Նիստը ամփոփեց գենդերային հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ, Արարատի մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանը:

Հանձնաժողովի նախագահ՝  Ա. Վարդանյան
Քարտուղար՝  Յ. Գրիգորյան